



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբեր, 2020 թվականի № 65-Լ

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2020 թվականի դեկտեմբերի 22-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N 40/20 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել Ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները՝ համաձայն սույն որոշման N° 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 դեկտեմբեր, 2020 թվականի

ք. Երևան

_____ Ա. Շիրինյան
29 դեկտեմբեր, 2020թ.

**«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական
ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց
առանձին բաժինների համամասնությունները**

N	Կրթական-մշակութային տեսալսողական ծրագրի առանձին բաժիններ	Տեսալսողական ծրագրի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
1	Մշակութային լրատվություն	280.0
2	Մշակութային հաղորդումներ	1,950.0
3	Հոգևոր հաղորդումներ	890.0
4	Երաժշտական ծրագրեր և համերգներ	870.0
5	Մանկական հաղորդումներ	930.0
6	Ուսումնական և այլ հաղորդումներ	715.0
7	Գիտահանրամատչելի, ուսումնական, վավերագրական կինոնկարներ	935.0
ԸՆԴԱՄԵՆԸ		6,570.0